



կացության իրավունք ստանալուց կարևոր է առաջին իսկ հնարավորության դեպքում բանկում հաշիվ բացել: Շատ քայլեր կախված են դրանից:

Յուրաքանչյուր բանկում բանկային հաշիվ բացելու պայմանները և կառավարման ծախսերը կարող են լինել տարբեր: Ընտրությունս անելուց առաջ ես պետք է հետաքրքրվեմ և տեղեկանամ առաջարկվող ծառայություններին, մասնավորապես առկա մասնաճյուղերի քանակին և բանկոմատներին, որենք ինձ թույլ կտան մուտք գործել առցանց ծառայությունների համակարգ:



Հաշվային քաղվածքներ

Ամեն անգամ, որևիցե գործողություն կատարելուց (օրինակ ապրանքագիր վճարել) կարող եմ այն տպել, որպեսզի հետքը պահպանվի: Կարող եմ պարբերաբար տպել իմ հաշվի համարի քաղվածքները նաև բանկոմատում. դա իմ հաշվի համարից կատարված բոլոր գործողությունների ցուցակն է: Կան բանկեր, որոնք կարող են այդ քաղվածքները ուղարկել տուն:

Այդ քաղվածքները շատ կարևոր է պահպանել թղթապանակում: Որոշ վարչական գործողությունների համար դրանք կարող են անհրաժեշտ լինել:



Բանկային քարտ

անվտանգության համար այս քարտը ունի ծածկագիր, որը հարկավոր է մտապահել և հավաքել յուրաքանչյուր գործողությունից առաջ: Քարտը նաև հարկավոր է ստորագրել: Այն ինձ թույլ է տալիս բանկից փող հանել, կատարել բոլոր գործողությունները առաջարկվող բանկոմատի կողմից և վճարել ապրանքի կամ ծառայությունների համար այն առևտրի կետերում, որտեղ կան բանկոնտակտ (bancontact) ապարատներ (այդ առևտրի կետերում փակցված է Bancontact/ Mister Cash):

Քարտը գողանալու և կորցնելու դեպքում անմիջապես տեղեկացնում եմ 070/344.344 "CARD STOP": Այս ծառայությունը գործում է 24/24 ժամ և հանձն է առնում անհրաժեշտության դեպքում սառեցնել քարտը: Այնուհետև հայտ եմ ներկայացնում ոստիկանություն գողության կամ կորստի մասին և դիմում բանկին նոր քարտ ստանալու համար:





Գնումները քարտով վճարելու համար.

- Տեղադրում եմ քարտը վճարման սարքի մեջ, պաշտպանիչ շերտը ուղղված ներքև:
- հավաքում եմ գաղտնի ծածկագիրը . և սեղմում OK:
- Ետ եմ վերցնում քարտս և վաճառողը ինձ է տալիս ապարատից տպված կտրոնը:

Գաղտնի ծածկագիր

Գաղտնի ծածկագիրը հարկավոր է մտապահել և հատկապես խուսափել այն թղթի վրա գրած պահել դրամապանակում:

Բազմաթիվ անձիք օգտագործում են իրենց ծննդյան տարեթիվը որպես գաղտնագիր:

Զգույշ, եթե կորցնեմ դրամապանակս, անբարյացակամ մեկը կարող է հեշտությամբ իմանալ ծննդյանս տարեթիվը անձս հաստատող փաստաթղթով: Ավելի լավ է ընտրել օրինակ բջջայինի փին ծածկագիրը:

Ուշադրություն, եթե երեք անգամ սխալվեմ գաղտնի ծածկագիրը հավաքելիս, քարտս կսառեցվի: Դրանից հետո պետք է դիմել բանկին այն կրկին շրջանառության մեջ դնելու համար:



Ապրանքագրեր (ֆակտուրա)




Ապրանքագիրը դա հանգամանալից գրառում է, որտեղ նշվում է իմ ազգանունը, վճարման ենթակա գումարը, հաշվեհամարը, որին փոխանցվելու է գումարը և վճարման վերջնաժամկետը: Դա կարող է լինել գնված ապրանքների կամ մատուցված ծառայությունների համար. տան վարձ, էլեկտրականություն, ջուր, ապահովագրություն, ավանդ, հիվանդանոցային ծախսեր, դպրոցի վճարներ...



Ապրանքագիր մուծելու համար հարկ կարող է համարվել լրացնելու փոխանցման կամ ներդրման բլանկը: Դա կարող է լինել թղթի ձևով (լրացնում եմ և ներկայացնում բանկ) կամ համակարգչային ձևով (ինքս կատարում եմ բանկումատում):

Թղթի ձևով փոխանցումը պետք է լինի ստորագրված և գրված լինի ամսաթիվը: Լրացնում եմ հետևյալ վանդակները. վճարման գումարը, ստորագրությունը, ամսաթիվը, հաշվեհամարը, որին փոխանցում եմ գումարը, ստացողի ազգանունը և հասցեն, փոխանցողի հաշվեհամարը (իմը), փոխանցողի ազգանունը և հասցեն (ես), հաղորդագրությունը (նշում եմ ինչ եմ վճարում):

Ապրանքագրեր (ֆակտուրա)



Փոխանցման թերթիկը բաղկացած է երկու մասից: Առանձնացնում են երկու մասերը իրարից զգուշորեն. ներկայացնում են առաջինը բանկ, որը հանձն է առնում վճարումը իրականացնել, իսկ երկրորդը պահում են որպես ապացույց:

ՁԵՌԱԳԻՐԸ ՊԵՏՔ Է ԼԻՆԻ ԸՆԹԵՌՆԵԼԻ և ԱՌԱՆՅ ՋՆՋՈՒՄՆԵՐԻ.

Միջազգային փոխանցման համար պետք է օգտագործեմ ԻԲԱՆ (IBAN) ծածկագիրը: Դա միջազգային հաշվեհամարների նիշն է: Այն սկսվում է IBAN-ով, այնուհետև երկրի տառերը, օրինակ՝ Բելգիայի համար, Ֆրանսիայի





համար, հետո յուրաքանչյուր բանկի տարբերակիչ համարը, հետո իմ հաշվեհամարի թվերը: Ես IBAN-ի համարը կարող եմ գտնել քարտի կամ հաշվեհամարի քաղվածքների վրա:

Զգուշացեք վարկերից



Շուկայում առկա են ապառիկ ապրանք ձեռք բերելու կամ կանխիկ վարկ վերցնելու բազմաթիվ առաջարկություններ: Նրանք կարող են ծառայել երբեմն վճարումը տարածելու համար: Սակայն, աղետալի պարտքի ռիսկը պետք է լուրջ ընդունել: Սա իսկական սոցիալական չարիք է:

Փոխառված գումարը անվճար չէ. վարկերի մեծ մասը ներգրավում են բարձր տոկոսադրույքներ, որոնք պետք է ստանձնել:

ինչպես ընդգծում է հաստատված բանաձևը "փող վերցնելը՝ փող արժի"